ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 163-Ա 06 մարտի 2026 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԶԱՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՎԵՐ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 220-րդ, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին փոխարինող Համբարձում Սաֆարյանի 2026 թվականի մարտի 2-ի Ն/741-2026 զեկուցագիրը, ինչպես նաև Նվեր Գալստյանի գրավոր բացատրությունը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովազարդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նվեր Գալստյանի նկատմամբ, աշխատանքային պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, այն է՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովազարդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտների միջև տեղի ունեցած վիճաբանության արդյունքում աշակերտերից մեկի քթի կոտրվածք ստանալու հետևանքով հիվանդանոցում հայտնվելու

վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին որևէ տեղեկատվություն չներկայացնելու հանգամանքով պայմանավորված, տնօրեն Նվեր Գալստյանի նկատմամբ կիրառել «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

06.03.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ